

**ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ ԱՐԱՄԱՅԻՍ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ
ՈՒՂԵՐԶԸ ՄԱՅԻՍԻ 9-Ի՝ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ**

09.05.2017



Սիրելի՛ հայրենակիցներ,

Ի սրտե շնորհավորում եմ ձեզ Հաղթանակի և խաղաղության տոնի առթիվ:

Մայիսի 9-ը հայ ժողովրդի պատմության ամենահիշարժան ու կարևորագույն տոներից մեկն է, որ խորհրդանշում է հայ ժողովրդի հերոսական ոգին, անսասան կամքն ու ազատատենչությունը: Մեծ Հայրենականի հաղթական ավարտից մինչև Շուշիի հերոսական գրավում ու մեր օրեր հայը հաստատել է ազատ ու շենացող երկիր ունենալու իր իրավունքը:

Թող, որ հայ մարտիկը, մտավորականը, շինարարն ու գործարարը իրենց քաջությունն ու ստեղծագործ միտքը դրսևորեն միայն խաղաղ պայմաններում, խաղաղ երկնքի տակ:

Եվս մեկ անգամ շնորհավորում եմ ձեզ կարևորագույն այս օրվա կապակցությամբ և մաղթում քաջառողջություն, բարօրություն և նորանոր հաղթանակներ բոլոր բնագավառներում:

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ՝

ԱՐԱՄԱՅԻՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ